## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

### N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-39
### ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** <<26 >>. <<08>>. **2025թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Խ.Իգիթյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մայրապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 06.02.2025 թվականին կնքված **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-39** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի վճարման կարգը**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-39** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **30 000 000** (երեսուն միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել ևս **20 000 000** (քսան միլիոն) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի **60 000 000** (վաթսուն միլիոն) ՀՀ դրամ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| **ՀՀ ներքին գործերի նախարարություն** | **<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ** |
| **ք. Երևան, Նալբանդյան 130** | **ք. Երևան, Բայրոնի փող. 3** |
| **ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** | **<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ** |
| **Հ/Հ 900011042471** | **Հ/Հ 1570003667300100** |
| **ՀՎՀՀ 02882913** | **ՀՎՀՀ 01557589** |
| **Հեռ. 010 59-61-52** | **հեռ. 010 77-70-10** |
| **Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am** | **Էլ. փոստ: info@toyota.am** |
| ____________ **Խ.Իգիթյան** | ____________ **Ա. Մայրապետյան** |
| **/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող /** | **տնօրեն** |
| **(ստորագրություն)** | **(ստորագրություն)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

*Հավելված N 1*
*<<26>> 08 2025թ.*
*ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-39 ծածկագրով գնման պայմանագրի*

## Վճարման ժամանակացույց

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/3 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | | | | | | | | 20 000 000 | 20 000 000 | 20 000 000 | 20 000 000 | 20 000 000 | **20 000 000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011042471**
**ՀՎՀՀ 02882913**
**Հեռ. 010 59-61-52**
**Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**

**_______________ Խ.Իգիթյան**
**/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող /**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**ԿԱՏԱՐՈՂ**
**<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ**
**ք. Երևան, Բայրոնի փող. 3**
**<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ**
**Հ/Հ 1570003667300100**
**ՀՎՀՀ 01557589**
**հեռ. 010 77-70-10**

**Էլ. փոստ: info@toyota.am**

**_______________ Ա. Մայրապետյան**
**տնօրեն**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**